մուգ-դեղնագոյն եւրոպական կարճ պալտո: Կարճ պալտոն եւ երկայն անթարին վերեւից պնդած էին շալէ հաստ գօտիով, որը մի քանի փաթոթներով պատած էր նրա մէջքին: Նրա նեղ պանտալոնը հագիւ իջնում էր ծնկներից մի փոքր ցած: Սրունքները բաց էին մնացած: Երեւում էր, որ այդ ողորմելի պանտալոնը նա գնել էր հնոտիների բազարից, այդ պատճառով նրա համար չափազանց կարճ էր: Դասատան մէջ նա հագած ունէր մի տեսակ հողաթափներ, որոնք երեք մատի հաստութեամբ փայտեայ տակեր ունէին, եւ շարժելու ժամանակ այդ տախտակները խիստ օտարոտի ձայներ էին հանում աղիւսով պատած յատակի վրայ: Միակ առարկան, որ ցոյց էր տալիս, թէ նա գրի ու կարդալու մարդ է, էր նրա ահագին թանաքամանը, որ փորի վրայ խրած ունէր գօտիի մէջ: Այդ ինքնուրոյն թանաքամանը կազմուած էր պղնձէ երկայն քառանկիւնի փողից, որի մի ծայրի կողքին ամրացրած էր բուն թանաքամանը, թրաշած բաժակի ձեւով: Նրա մէջ թանաք էր ածած եւ սեւ աբրեշումի թելեր էր դրած, որպէսզի թելերը հեղուկ թանաքը իրանց մէջ ծծէին, որ չվիթոէր: Քառանկիւնի փողի մէջ ամէն բան կար, այնտեղ կար եւ զմելի, եւ գրիչ. այնտեղ կար մի մազաշ, որով պատոելին իր քթից մազեր էր դուրս հանում, այնտեղ կար եւ մի ականջափորիկ՝ թէյի փոքրիկ գդալի չափով, որով եւ թանաքամանի մէջ ջուր էր ածում ցամաքելու ժամանակ, եւ ականջների կեղտն էր դուրս տալիս, երբ բաւական լցւում էին, այնտեղ կար եւ մի ածելի, որով պատոելին երեսը ածիլում էր: Պատոելիի այդ գրական պարագայքը լրացնում էին եւ մի քանի այլ առարկաներ, որ նոյնպէս քարշ էին ընկած նրա գօտիից. դրանցից մէկն էր նրա կարճ ծխաքարշը փայտեայ կոթով, երկրորդը, գոյնզգոյն ճոթերից կարուած մի մեծ քսակ էր, որի մէջ ծխախոտ էր ածած, իսկ երրորդը, երկաթեայ մի փոքրիկ ունելի էր, որով ծխաքարշի վրայ կրակ էր դնում, երբ պէտք էր վառել նրան, իսկ հարկաւոր ժամանակ նրանով բռնում էր աշակերտների քթից եւ հուփ էր տալիս...

Տեսնելով մեզ, Սիմոն պատոելիի առաջին հոգսը եղաւ հանգստացնել իր աշակերտներին «սո՛ւս», «սո՛ւս» գոչելով, ճիպոտը ձեռքին, նա սկսեց վազ տալ դասատան այս կողմը, այն կողմը, մի քանի պտոյտներ գործեց, մի քանի հայհոյանքներ տոեց, աշակերտներից մէկի մազերից բռնելով, նստեցրեց իր տեղը, միւսի ականջները ձգձգեց եւ, վերջապէս, նրան յաջողեցաւ կարգը վերականգնել: Բոլոր աշակերտները լռեցին եւ իւրաքանչիւրը իւր տեղում անշարժ նստած մնաց: Այդ գործողութիւնը թէեւ փոշու թանձր մառախուղ բարձրացրեց, առանց դրան եւս լոյսից զրկուած դասատան մէջ, բայց այդ մթութեան միջից դարձեալ կարելի էր տեսնել, թէ ինչպէս աշակերտները երկչոտ կերպով, ապուշ-ապուշ նայում էին մեզ վրայ: